

ԴԱՎԻԹ ԳՅՈՒՐՋԻՆՅԱՆ

քանասիրական գիրք. թեկնածու

ՀԱՅԱՀԱՎԱՔ(ՈՒՄ). ՀԱՄԿԱՑՈՒԹՅՈՒՆԸ
ԵՒ ԲԱՌԱՅԻՆ ԴՐՍԵՒՈՐՈՒՄՆԵՐԸ

Պարեր շարունակ հայուլթյան ազգային երազանքներից մեկն այս է՝ թողնել օտար ավերը եւ վերադառնալ հայրենի տուն, Հայոց աշխարհ՝ Հայաստան: Հայոց պատմութեան ընթացքում շատ քիչ են այն ժամանակաշրջանները, երբ հայրենիքից հեռացած հայերը կարողացել են վերադառնալ (մեծ եւ փոքր խմբերով կամ զանգվածաբար) հայրենի երկիր: Հայրենիքը տեւաբար չի ունեցել այդ զորութիւնը, եւ հայրենի հողում հայուլթյան հավաքվելը դարձել է հայոց նվիրական իղձերից ու կարեւորագույն նպատակներից մեկը: Այն այժմեական է առ այսօր, եւ այդպէս կլինի այնքան ժամանակ, քանի դեռ հայուլթիւնը չի համախմբվել իր բնօրրանում:

Պատմական տարբեր ժամանակաշրջաններում եւ տարբեր հանգամանքների թելադրանքով ազգային այս երազանքից՝ հայրենիք վերադառնալու գաղափարից են ծնունդ առել մի շարք բառեր, ինչպէս՝ փոնդարձ, հայրենադարձություն, ազգահավաք/ազգահավաքում, հայահավաք/հայահավաքում Այս հետազոտութեամբ կանդրադառնանք մասնավորապէս վերջիններին՝ հայահավաք/հայահավաքում բառերին, որոնք արտահայտիչն են ազգի կենսունակութեան, զորացման, ինչպէս նաեւ երկրի ապագայի հարցում էական նշանակութիւն ունեցող մի նպատակի՝ հայերին համախմբելուն եւ իրենց հայրենիքում հավաքելուն:

Հասկացության ծագումն. «Հայահավաք/հայահավաքում»-ը հաճախ ընկալվում է իբրեւ նոր ժամանակների հասկացութիւն, եւ այն սովորաբար կապում են Ի. դարի նշանակալից իրադարձութիւններին, մասնավորապէս որբահավաքին (հայոց Մեծ եղեռնից հետո) եւ հայրենադարձութեանը Խորհրդային Հայաստան (հատկապէս 20-ական եւ 1946-48 թվականներին): Հասկացութեան նոր լինելու ընկալում կա նաեւ այն պատճառով,

որ հայահավաք-ը, որ լայնորեն գործածվող բառ է, երբեմն երեւում է հայկական տարբեր կուսակցությունների եւ կազմակերպությունների, միավորումների ծրագրային եւ այլ փաստաթղթերում¹:

Սակայն այս ընկալումը թվացյալ է. հայահավաքման գաղափարի սկզբնավորումն ու ձեւավորումը գիտնականներն առնչում են շատ ավելի վաղ ժամանակների: Այդ մասին խոսվում է նախ առանց հայահավաքում կամ հայահավաք բառերը գործածելու, ինչպես՝ «Եւ ահա ծնվում է ցրված հայ ժողովրդին ի մի հավաքելու եւ փրկելու ձգտումը որոշ գաղափարախոսությամբ, որի առաջին արտահայտիչը գրականության մեջ՝ է մեծիմաստ Սարկավագ Վարդապետը»²: Խոսքը վերաբերում է ԺԱ. դարի երկրորդ կեսին:

Միայն շատ դարեր անց այս նույն գաղափարին առնչվող խոսույթ է ներմուծվում հայահավաքում բառը. «Հայահավաքման հայրենասիրական ըղձանքը մեր մարտնչագրության մեջ առաջին անգամ երևաց Անիական Հայաստանում, Անիում»³:

Մի բան, սակայն, անվիճելի է, անկախ հայահավաքում կամ հայահավաք բառերի գործածությունից, ԺԱ. դարի երկրորդ կեսին հայահավաքման գաղափարը հրապարակայնացնողը իմաստասեր եւ բանաստեղծ Հովհաննես Սարկավագն է (վախճ. 1129 թ.): Նշանավոր վարդապետի ապրած ժամանակաշրջանում սելջուկների արշավանքների հետեւանքով բազում հայեր հեռացել էին հայրենի երկրից եւ հայրենիքի կարոտը սրտներում՝ անուրախ կյանքով ապրում էին օտար հողի վրա:

Ղեկոնդյանց նվիրված շարականում, դիմելով Աստծուն, Հովհաննես Սարկավագը խնդրում է, որ Ամենակալը Հայ Եկեղեցու ցրված մանուկներին՝ երկրից քշվածներին ու հեռացածներին, ուրախությամբ ժողովի եւ փրկի⁴.

Բաղցրությամբ քո, Տէ՛ր, խնայեա՛ ի մեզ:

Հեղմամբ արեան արքոց քոց հօրապետաց

Ջնկեղեցոյ քոյ ցրուեալ մանկունս ժողովեա՛ յուրախութիւն

Զվարարեալս փրկմութեամբ

¹ Հմմտ. «Համաշխարհային հայահավաքը նախնյաց հողում՝ մնում է յուրաքանչյուրիս սրբազան երազանքը» («Ժառանգություն» կուսակցության ծրագրի 10-րդ՝ «Հայաստան-Սփյուռք հարաբերությունները» գլխից. www.heritage.am/hy/home/12?start=10):

² Մ. Արեղյան, Հայոց հին գրականության պատմություն, Երկեր, հ. Դ, Երևան, 1970, էջ 71:

³ Վ. Խեչումյան, «Վասն բարի ժամանակաց», «Յառաջ» օրաթերթ (Փարիզ), 05.11.1967:

⁴ Հմմտ. «Հովհաննես Սարկավագն իր գրած աղոթքով, ինչպես վերևում տեսանք, խնդրում է աստծուն, որ արտասովահոս տրտմությամբ վտարված ու ցրված ժողովուրդը ժողովի ուրախությամբ եւ փրկվի» (Մ. Արեղյան, նշվ. աշխ., էջ 145):

Եւ արքայապետաց յորդակոս քիւնամք.

Փրկութեան մերոյ պարգևաց քաշխող⁵:

Սա է «Հայահալաքման հայրենասիրական ըղձանքի»⁶ առաջին մատենական վկայութիւնը: Մեկ այլ բնութագրմամբ՝ «այստեղ է, որ առաջին անգամ արտահայտվում են ազգահալաքման (ընդգծումը մերն է - Դ.Գ.) եւ իսկական հայրենասիրութեան մոտիվներ»⁷, որտեղ խնդրո առարկա երեւոյթի մասին խոսելիս գործածվում է մեկ այլ բառ՝ ազգահալաքում՝ Ակնհայտ է, որ հայահալաքում եւ ազգահալաքում բառերը, գործածված լինելով միեւնոյն իրողութեան մասին, նույն հասկացութիւնն են արտահայտում եւ համարժեք են (բառերի երկրորդ բաղադրիչները նույնն են, առաջիններն են՝ ազգ եւ հայ, որ «հայութիւն, հայեր» է ընկալվում):

Դիպուկ է նկատել Մ. Աբեղյանը. «Յրված հայ ժողովուրդին հավաքելու այս տենչն ու ձգտումն ահա դառնում է մի նվիրական իղձ ու աղոթք եւ շատ վաղ, Լաստիվերտցու կրտսեր ժամանակակցի՝ Սարկավագ Վարդապետի ձեռով մտնում մեր ժամերգութեան մեջ»⁸: Մեծանուն հայագետը պատկերավոր է ներկայացնում «Պայծառացան այսօր» շարականը. «... իր բովանդակութեամբ մեծ ու վսեմ է եւ անկեղծորեն բխած լինելով իրականութիւնից, խորն ազդու է, մանավանդ երբ իր «քաղցր եղանակով» երգվում էր եկեղեցում տառապալ հավատացյալներից, առանձնապես նրանցից, որ դեռ երկար դարեր զգում էին իրենց վարատված⁹ լինելը, եւ աչքերը կարոտով դարձնում էին դեպի իրենց բնիկ երկիրը՝ Հայաստան»¹⁰: Եւ միանգամայն ճիշտ է այն դատողութիւնը, որ Եկեղեցին հաստատուն պահելն իմաստավորվում եւ արժեւորվում է այն ժամանակ, երբ հավատացյալ ժողովուրդն ազատ է բռնութիւնից եւ ապրում է հայրենի հողի վրա, ոչ թե որպէս պանդուխտ՝ օտարութեան մեջ:

⁵ Հովհաննէս Սարկավագ, Շարական Դեոնոքեանց. Գանձարան հայ հին քանաստեղծութեան, աշխատ.՝ Պ. Խաչատրյանի, Երեւան, 2000, էջ 225-226:

⁶ Վ. Խեչումյան, Վասն բարի ժամանակաց, նույն տեղում:

⁷ Գ. Ա. Հակոբյան, Շարականների ժանրը հայ միջնադարյան գրականության մեջ (V-XV դդ.), Երեւան, 1980, էջ 217:

⁸ Մ. Աբեղյան, նշվ. աշխ., էջ 71: Հայագետը շարունակում է. «Այդպէս դեռ չկա քաղաքական անկախության ինտիք, այլ միայն քաղաքականից ազատվելու եւ Հայաստանում մնալու մի իղձ է այդ»: Մեր կարծիքով ոչ թե Հայաստանում մնալու, այլ հայրենիք վերադառնալու, այնտեղ հավաքվելու իղձն է դա:

⁹ Նշանակում է «իրենց տեղից, երկրից բռնված, ցրուցան եղած»:

¹⁰ Մ. Աբեղյան, նշվ. աշխ., էջ 71:

Այս շարականի հայտնի տունն «իր աշխարհիկ բովանդակությամբ եւ հայրենասիրական ոգով նոր շունչ բերեց»¹¹ մեր շարականագրություն եւ հայրենասիրական երգի հիմք դարձավ հեղինակի կրտսեր ժամանակակցի՝ Ներսես Շնորհալու շարականների համար: Այնտեղ այդ մոտիվը զարգացավ, խորացավ, ապա ծավալվեց հետագա շարականագիրների ստեղծագործություններում:

Այդ նույն դարում Անիում, Շիրակում, Անիական Հայաստանում ձեւավորվում էր «Վասն բարի ժամանակաց» անունով ժողովրդական մի նոր վիպասանություն, որտեղ ցրված հայերին հավաքելը գլխավոր հարցերից մեկն էր: Հառիճավանքում 1219-ին վիպասանությունը գրի առնվեց, սակայն շատ բան աղճատվեց: Բարեբախտաբար «ահագին բան մնաց, եւ մեզ հասավ նաեւ այն հատուածի մասունքը, որ վերաբերում է հայաստաւարմանը: «Վասն բարի ժամանակաց» ժողովրդական նոր վիպանքը մի քայլ էլ առաջ տարաւ Յովհաննէս Սարկաւագի միտքը, հայաստաւարման խնդիրը կապելով զօրեղ պետականութիւն հիմնելու կարեւորութեանը»¹²: Երբ ժողովուրդը ոչնչացնի թշնամիներին ու ստեղծի ուժեղ պետականություն, այդ ժամանակ էլ Հայաստան կվերադառնան պանդխտացած հայերը.

Եւ եկեացեն իւրաքանչիւր տեղաց

Ուր ցրուեալ են ի պիղծ եւ անաւրէս ազգէն ներսդաց:

Ժողովրդական այս ստեղծագործության գոյությունը վկայում է, որ ազգահավաքման գաղափարը փաստորեն համակել էր նաեւ ժողովրդի տարբեր շրջանակներին:

Գրեթե նույն ժամանակներում (Հովհաննէս Սարկավագից հետո եւ «Վասն բարի ժամանակաց»-ի ձեւավորման շրջանում) «Հայահալած միեւնոյն ըղձանքի»¹³ մասին Կիլիկիայում իր խոսքն ասաց Ներսես Շնորհալին (մոտ 1100-1173): 1166 թ. ապրիլի 17-ին Հռոմկլայում գումարված ազգային-եկեղեցական ժողովում իր կաթողիկոսական ձեռնադրության եւ օծման առթիվ արտասանած ատենաբանություն-ճառի մեջ նա հիշեցրեց, որ հայ ժողովուրդը, ինչպես մյուս ժողովուրդները, չի բնակվում մի երկրում. մեր ազգը ցրված է աշխարհով մեկ, տարբեր ազգերի մեջ. «Ոչ ի միում աշխարհի քնակեն՝ որպէս այլոց ազգաց, զի դիւրին էր շրջել առ նոսա

¹¹ Գ. Ա. Հակոբյան, նշվ. աշխ., էջ 217:

¹² Վ. Խեչումյան, նույն տեղում: Ընդգծումները մերն են:

¹³ Վ. Խեչումյան, նույն տեղում:

ստաջնորդացն է սերմանել զբանն, այլ ըստ մեղաց մերոց ցրուեալ են ազգ մեր եւ ժողովուրդը ընդ ոլորտս փեղեղեաց ի մէջ օտարաստե ազանց»¹⁴: Հայության կյանքի դժվարին պայմանների պատճառով աստանդական էր նաեւ կաթողիկոսական աթոռը, եւ դա նորընտիր կաթողիկոսի մտահոգություններից մեկն էր:

Ատենաբանության վերջում Շնորհալին հայցում է Աստուծոց «Հալածել զյարուցեալսն ի վերայ, եւ փրկել զմեզ ի բերանոյ առիւծոց, ազատել զգերեալսն ի տանէ կապանաց եւ դարձուցանել զամենեսեան յաշխարհն հայրենի»¹⁵: Այսպես է ձեւակերպում ազգահավաքման իր իղձը Հայոց Հայրապետը:

Այս գաղափարը Շնորհալին հետագայում արտացոլեց «Ողբ Եդեսիոյ» վիպասանության մեջ: Ներքոբերյալ տողերը համահունչ են «Վասն բարի ժամանակաց»-ին.

Գան ժողովին յամէն կողմանց,
Որ հալածեալ են եւ ցրուած:

Չորեքձագեան փեղեղեաց.
Ի գաւառաց հեթանոսաց,
Եւ յաշխարհաց Պարսից, Թուրքաց¹⁶:

Առաջին հայահավաքը. Հայ պատմագիտության մեջ ընդունված մոտեցում չկա, թե ո՛րն է առաջին հայահավաքը եւ այն ե՛րբ է տեղի ունեցել: Մինչեւ նոր ժամանակներ հայրենիքում հայությանը հավաքելու իրական գործընթաց տեղի չի ունեցել, ընդհակառակը՝ տարբեր դարաշրջաններում հայերը հաճախ զանգվածաբար հեռացել են հայրենի երկրից (ինչպես կամովին, այնպես էլ բռնագաղթների հետեւանքով):

Պատմական փաստերը վկայում են, որ առաջին հայահավաքը տեղի է ունեցել ԺԹ. դարի առաջին տասնամյակներին: Հայտնի է, որ 1826-28

¹⁴ Ներսէս Շնորհալի, Թուրք ընդհանրական, Էջմիածին, 1865, էջ 422:

¹⁵ Ներսէս Շնորհալի, նշվ. աշխ., էջ 425-426: Այս առիթով հայագիտության մեջ սովորաբար գործածվում է *ազգահավաքում* բառը: Այսպես, օրինակ. «Հայրենատարձության, ազգահավաքման գաղափարը նույնպես կարելու է Շնորհալու ստեղծագործության մեջ» (Ա. Մաղոյան, Ներսէս Շնորհալի. Հայ մշակույթի գործիչները (V-XVIII դարեր), Երևան, 1976, էջ 253):

¹⁶ Հարկ է նշել, որ Մ. Արեղյանն այս տողերում տեսնում է Շնորհալու «քաղաքական լավատեսությունը եւ լավ օրերի երազը» (Մ. Արեղյան, Երկեր, հ. Դ, էջ 143)՝ այն կապելով Արեւմուտքից խաչակիրների սպասելի երկրորդ արշավանքներին. դրանց շնորհիվ արեւելյան քրիստոնյաները պիտի փրկվեին մահմեդականների ձեռքից: Հայահավաքման մասին, սակայն, Մ. Արեղյանն ակնարկ չի անում:

ԹԹ. ռուս-պարսկական պատերազմից հետո կնքված Թուրքմենչայի պայմանագրի համաձայն Պարսկաստանի հայերը կարող էին վերադառնալ իրենց նախնիների բնօրրանը՝ Արեւելյան Հայաստան, Ռուսական կայսրությանն անցած տարածքներ: 1828-29 թթ. հայրենի երկիր վերադարձան շուրջ 45 հազար հայեր:

Խորհրդային պատմագիտության մեջ, հանրագիտարաններում եւ դասագրքերում այս առիթով ցարդ գործածվել են առավելաբար հայրենադարձություն, ազգահավաք, ազգահավաքում¹⁷, ներգաղթ¹⁸ բառերը եւ ազգի համախմբում (կամ կոնսոլիդացիա) բառակապակցությունը. հայահավաք-ը եւ հայահավաքում-ը հազվադեպ են¹⁹:

Մեր օրերում պատմական այս կարեւոր իրադարձությունն անվանվում է նաեւ մեզ հետաքրքրող բառերից հայահավաք-ով: Այսպես. «1828-1830 թվականներին Կովկասի ռուսաց իրաւաստւոյթեան գաղթը նշանավոր է նրանով, որ դա հայ ժողովրդի պատմութեան մեջ առաջին ներգաղթն էր եւ առաջին հայահավաքը»²⁰: Առհասարակ պիտի արձանագրենք, որ հայահավաքում եւ հայահավաք բառերի գործածությունն արեւելահայերենում, մասնավորապես Հայաստանում, ակտիվացել է վերջին 25 տարում՝ անկախությունից հետո ընկած ժամանակահատվածում:

Հայահավաք/հայահավաքում բառերի սրբազան ժամանակը, կազմությունը, ձեւարանական արժեքը: Հայերին մեկտեղելու, հայրենիքում հավաքելու գաղափարն իր բառային դրսեւորումը ստացավ հայ բաղադրիչով երկու բառերում՝ հայահավաքում եւ հայահավաք: Զուտ ձեւային

¹⁷ Հմմտ., օրինակ, Հ. Ու. Մելիքսեթյան, «Հայրենիք-սփյուռք առնչությունները եւ հայրենադարձությունը» աշխատությունը (Երևան, 1985), որտեղ քանիցս գործածվել է *ազգահավաքում* բառը (էջ 8, 9, 24, 83, 107 եւ այլն), բայց ոչ մի անգամ *հայահավաք* կամ *հայահավաքում*

¹⁸ Ներգաղթ-ի հականիշն է *արտագաղթ*-ը, որն էլ որոշակի խոսքաշարում *հայահավաք*-ի խոսքային կամ համատեքստային հականիշ է դառնում (այս տեսակի հականիշների մասին հանգամանակից տե՛ս Ս. Ա. Էլոյան, Ժամանակակից հայերենի բառային ոճաբանություն, Երևան, 1989, էջ 138-143): Այսպես. «Դրա համար եկեք այնպիսի երկիր կառուցենք, որ հայահավաք Կովկասի ռուսաց, այլ ոչ արտագաղթ» (Հ. Հովհաննիսյան. www.haynews.am/hy/1369831443): «Ցանկանում ենք հայրենիքը Կովկասից հեռացնել, Կովկասից մեր անմահ նահապետների Կովկասյանների իրականացումը, Կովկասից ոչ արտագաղթ, այլ հայահավաք եւ հողահավաք» (Ռ. Կորյուն, <http://asbarez.com/arm/186220/>):

¹⁹ Ըստ ԱՐԵՎԱԿ-ի (Արեւելահայերենի ազգային կորպուս) տվյալների՝ Հայկական սովետական հանրագիտարանում *հայահավաք* բառը չի գործածվել, իսկ *հայահավաքում*-ը՝ ընդամենը մեկ անգամ: Այսպես, 1925-27 թթ. Թեհրանում լույս տեսած «Գաղափար» թերթի մասին հոդվածում գրված է. «Զգրվել է սփյուռքը կապել մայր հայրենիքին, ջապագովել հայահավաքման գաղափարը՝ աշակցելով Սովետական Հայաստանի կառավարության միջոցառումներին» (ՀՍՀ, հ. 2, Երևան, 1976, էջ 665):

²⁰ Վ. Բայրուրյան, Իրանի հայ համայնքը. արդի հիմնախնդիրներ, Երևան, 2013, էջ 7:

առումով տարբերություններ բայանուն գոյականներ կերտող -ում վերջածանցն է, որն ավելի ցայտուն է արտահայտում գործողություն, ընթացանություն գաղափարը:

Բառի ձևավորումը կապվում է հետեղեռնյան շրջանին՝ 1920-ական թվականներին: Ըստ մեր ունեցած բնագրային վկայումների՝ նախ շրջանառության մեջ է մտել հայահավաքումը: Վաղ գործածություններից դիտարկենք այս մեկը, որտեղ կա ընդամենը երեք նախադասություն եւ բառի նույնքան գործածություն. «Հայահավաքումը հայ ազգային քաղաքականությանն առաջին խնդիրն է: Առանց հայահավաքման չկայ ոչ մշակութային եւ քաղաքական ուժերի, ոչ էլ հայկական ուժերի կենդանացումը Մի զգալի չափով հայահավաքումը հնարատր է անգամներկայ Հայաստանում»²¹:

Հայահավաք (Հայ+Հավաք/ել/) բառը «գոյական+հոդակապ+բայարմատ» բառակազմական կաղապարի իրացում է: Կազմվել է արդեն գոյություն ունեցող Հայերեն այլ բառերի համաբանություն, նմանակություն օրենքի հիման վրա: Նախօրինակներ կան Ե. դարից սկսած. հին հայերենում հաւաք վերջնաբաղադրիչով կազմվել են բառակազմական տարբեր ենթակաղապարներ ներկայացնող այսպիսի բառեր՝ դժուարահաւաք, բազմահաւաք, ծաղկահաւաք, զանազանահաւաք²²: Դրանցից ոչ մեկի առաջին բաղադրիչն անձնանիշ կամ հավաքական գոյական չէ (ինչպես հայահավաք-ի դեպքում է):

Հայերենի զարգացման նոր եւ նորագույն շրջանում են կազմվել գորահաւաք, զինահաւաք, բանահաւաք, գրահաւաք, քարահաւաք, մրգահաւաք, լրահաւաք, բերքահաւաք, մանկահաւաք, ազգահաւաք, որքահաւաք, մարդահաւաք, ջրահաւաք, հողահաւաք, փաստահաւաք, բառահաւաք, բառարանահաւաք եւ նման ուրիշ բառեր (մի քանիսը բառարանային գրանցում չունեն): Հայահավաքը սրանցից մեկն է, աշխարհաբարյան կազմություն:

Ուշադրություն դարձնենք, որ թվարկված կազմություններում գոյական առաջին բաղադրիչները հիմնականում իրանիշ են: Իմաստային-բառակազմական տեսանկյունից մեզ հետաքրքրող բառային միավորը համեմատելի է որքահաւաք, մարդահաւաք, ազգահաւաք²³ բառերին: Այս վեր-

²¹ Արտ. Արեղեան, Հայաստան եւ արտաքին հարեւաններ (Ազգային քաղաքականության խնդիրներ), «Հայրենիք» ամսագիր, հ. 2, դեկտեմբեր, 1929:

²² Գ. Աւետիսեան, Խ. Միրմելեան, Մ. Աղեբեան, ՆԲՀ, հ. Ա-Բ, Վենետիկ, 1836-1837: Հր. Աճառյան, Հայերեն արմատական բառարան, հ. 3, Երևան, 1977, էջ 71:

²³ Հետաքրքրական է հայահավաք բառին համարժեք հայ ազգահավաք բառակապակցությունը, որ 1947 թ. ապրիլի վերջերին Նյու Յորքում բացված Հայկական համաշխարհային կոնգրեսին հղած ողջույնի խոսքում գործածել է Ամենայն Հայոց Գեորգ Զ. Կաթողիկոսը. «Հոգեզմայլ է ախյոտքի պատմական հայրենատարձը, հոգեզմայլ հարությունն է

Ջինի Հետ աղերսելով՝ հայ բաղադրիչը կարելի է մեկնաբանել նաեւ իբրեւ հայություն, այսինքն՝ «Հայերին կամ հայությանը հավաքող՝ միավորող»:

Հավաք վերջնաբաղադրիչով բառերն առհասարակ կա՛մ ածականներ են (փաստահավաք), կա՛մ գոյականներ (գորահավաք, քերքահավաք, բանահավաք) եւ կամ թե՛ ածական, թե՛ գոյական միաժամանակ (ջրահավաք), այսինքն՝ ձեւաբանորեն երկարժեք են: Հայահավաք-ը երկարժեք է²⁴:

Ածականի արժեքով բառը նշանակում է «Հայերին կամ հայությանը հավաքող՝ ի մի բերող՝ միավորող» ու ստանում գործունեություն, համակարգ, առաքելություն, դեր, ծրագրեր, համաժողով/խորհրդաժողով եւ մի շարք այլ լրացյալներ: Օրինակ՝ «Շուրջ երեք դար Կիլիկիայի Հայոց պետության հարկի ներքո հանգրվանած կաթողիկոսարանն իր հայահավաք դերը կրկին շարունակում է Մայր Հայրենիքում՝ արքայան Արարատի սպիտակափառ հայացքի ներքո, լուսավորչապասկ Ս. Էջմիածնում»²⁵:

Բառի իմաստային կառուցվածքում կարելի է նշել նաեւ «Հայերին կամ հայությանը համախմբող» իմաստային բաղադրիչը: Հմմտ. «ՀՀ սփյուռքի նախարարության բոլոր ծրագրերն էլ կյանքի են կոչվում եւ միշտ ունեն հայահավաք, հայասպահայան առաքելություն»²⁶:

Գոյականի արժեքով նշանակում է «Հայերին կամ հայությանը հավաքելը՝ ի մի բերելը՝ միավորելը. հայահավաքում»: Օրինակ՝ «-Հայրուրապե՛յր, ճի՛շտ է, որ հայահավաք է սկսվել,- հարցրեց Զոնին»²⁷:

Ժամանակի ընթացքում, ինչպես ցույց են տալիս լեզվական փաստերը, հայահավաքում եւ հայահավաք բառերից առավել գործածական դարձավ երկրորդը:

հայ փարագրության, խոշորագույն կովանը հայ ազգահավաքի եւ հարահոս աղբյուրը հայ ժողովրդի հոգեւոր միաձուլման եւ հայ հայրենիքի, հայրենական պետության հզորացման» (տե՛ս Հ. Ու. Մելիքսեթյան, նշվ. աշխ., էջ 344):

²⁴ Ուշագրավ է այս խոսքաշարը, որտեղ կից պարբերություններում հայահավաք-ը հանդես է եկել նախ գոյականի, ապա՝ ածականի նշանակությամբ. «Երզնկայի գրավումից անմիջապես հետո հայահավաքի առաքելությամբ Երզնկա հասրապովեց ազգային-ազատագրական հայրնի գործիչ Սեբաստացի Մուրադը: Մասնավորապես, հայահավաք որոնող խմբի կին անդամները մանր կտորներ են վաճառողների դիմակի տակ մրնում էին թուրքերի փնտրել, գրույցի մրնում, կաշառում էին թուրք կանանց, խմանում հարեմների մեջ պահվող հայերի փեղերը եւ լուր տալիս Մուրադին, որն այնուհետքի իր խմբով մրնում էր այդ փնտրել ու ազատագրում այնպեղ պահվող հայ կանանց ու երեխաներին»: (Ռ. Թաթոյան, Հայոց ցեղասպանության վերապրածների եւ փախստականների համար օգնության կազմակերպումը Երզնկայում քաղաքի ոռոսական վերահսկողության տակ գտնվելու շրջանում (1916 թ. հուլիս-1917 թ. վերջ), էջ 1:

²⁵ Արարատյան Հայրապետական թեմի պատմություն. www.qahana.am/am/history:

²⁶ www.old1.hayernaysor.am/1312273835:

²⁷ Բ. Վերդյան, Ծաղիկներս մնացին հեմվում, Երևան, 1990, էջ 212 (առաջին հրատ.՝ 1969):

Հայահավաքի (հայահավաքման) ընկալումները. «Հայահավաք(ում)» հասկացությունը որոշ դեպքերում, պատմական որոշակի ժամանակաշրջանի վերաբերելով, սերտորեն առնչվում է որբահավաք հասկացությանը, հաճախ այդ բառերը միասին են գործածվում: Այսպես, օրինակ՝ «Ցեղասպան թուրքի ճիրաններէն ճողոպրած աշխարհացրիս հայեր լծուեցան որբահավաքի, հայահավաքի կազմակերպչական հսկայական աշխատանքին՝ համախմբելով որբերը, ինսամեղով ու դարմանելով հիւանդները, ծերերն ու անկարները»²⁸:

Հետաքրքրական է, որ մի շարք համատեքստերում հայահավաքը հասկացվում է հայ ազգին պատկանող կանանց եւ երեխաներին (որբերին) հավաքելը եւ հայությունը վերադարձնելը: Սա հայահավաք բառի իմաստային ընդգրկման մեջ ուշադրավ մի դրսեւորում է, ընդհանուրի եւ մասնավորի հարաբերակցություն ներկայացնող իրողություն: Եթե բառի իմաստն այս է՝ «հայերին հավաքող՝ ի մի բերող՝ միավորող», եւ «հայահավաքում», ապա տվյալ դեպքում հայեր ասելով ըմբռնվում են սեռային եւ տարիքային հետեւյալ խմբերը՝ կանայք եւ երեխաներ (ընկերային առումով՝ որբեր):

1916-17 թթ. Արեւմտյան Հայաստանում բարեսիրական կազմակերպությունների առջեւ ծառացած խնդիրների մասին այս խոսքաշարը հստակորեն ներկայացնում է հայահավաք բառի իմաստային մի դրսեւորումը. «...կազմակերպել հայահավաք՝ որոնել եւ ազատագրել թուրքական հարեւմներում ու քրդերի մութ պահվող՝ ցեղասպանությունը վերապրած հայ կանանց ու որբերին...»²⁹:

Եւս մեկ օրինակ: Հայտնի է, որ դանիացի միսիոներ օրիորդ Քարեն Եփփեն 1921 թ. նշանակվում է թուրքերի, քրդերի եւ այլոց առեւանգած հայ կանանց եւ որբերին ազատելու նպատակով Ազգերի լիգայի ստեղծած Հանձնախմբի լիազոր-կոմիսար: Հետեւյալ խոսքաշարում հստակ սահմանված է, թե «հայահավաք» ասելով ի՞նչ է հասկացվում. «Հայահավաք գործունեությունը կոչվում էր «Փրկության առաքելություն» կամ «Ազատարար առաքելություն», իսկ պաշարոնապես՝ «Մերձավոր Արեւելքում Ազգերի լիգայի՝ կանանց եւ մանուկների պաշարպանության գործ»³⁰:

²⁸ www.diariorarmenia.org.ar/lugares:

²⁹ Ռ. Թաթոյան, նույն տեղում:

³⁰ www.genocide-museum.am/arm/23.05.2015-100photos.php: Այստեղ արժե հատուկ նշել, որ Ք. Եփփեն հավատում էր, որ Հայ Եկեղեցին կարելու էր դեր ունի այլազգիների հետ ապրած եւ վարքորարարով, ըմբռնումներով ու կրոնական հավատալիքներով արմատներից հեռացած (անգամ օտարացած) հայերի մեջ անցյալի հիշատակն արթնացնելու եւ

Հետաքրքրական է, որ հայերենում ստեղծվել է որքահավաք բառը, իսկ գերեվարված հայուհիների առնչությամբ հատուկ բառ չի ստեղծվել: Թե ինչու, կարելի է միայն ենթադրություններ անել. ա) լեզվական. կարեւոր հանգամանք է բառակազմական հիմքի բաղադրելիությունը (որբ-ի բառակազմական արժեքը ցածր է, հմմտ. որբահնամ, որբանայ, որբանոց, որբուկ, որբուհի, որբություն), բ) ոչ լեզվական. ազգի ապագայի համար փրկված հայ մանուկների դերի առավել կարեւորումը:

Հայահավաք(ում)ը հաճախ ուղղակիորեն կապվում է «հայրենադարձություն» հասկացությունը (ոմանք այս հասկացությունները երբեմն նույնացնում են, որ ճիշտ է): Հայրենադարձությունը եւ հայահավաքը, իբրեւ հասկացություններ, բովանդակային տարբեր ընդգրկումներ ունեն, մտային տարբեր զուգորդումներ են առաջացնում եւ այլն: Բայց որ նրանք սերտորեն առնչվում են, եւ հայրենադարձությունը հայահավաքի մի դրսեւորում է, վկայում են նաեւ բնագրային օրինակները՝ «Պարմական այս ժամանակահատվածում այդ ինդիքներից են Հայաստանի պետության կայացումն ու ամրապնդումը, հայրենադարձությունը («հայահավաքը»), «Դարձ դեպի Հայրենիք», «Հայահավաք Յեղի բնօրրանում» կարգախոսները պիրի ամբողջական իրեն սփյուռքահայության գոյության նպատակներ» (Մ. Լալայան)³¹:

Բառարանային մշակումը. Հայահավաք/հայահավաքում բառերը բառարանային մշակման հարուստ պատմություն չունեն: Աշխարհաբարյան կազմություններ են, ուստի բացակայում են հայերենի զարգացման նախորդ շրջանների բառապաշարն ամփոփող բառարաններից: Չկան նաեւ Ս. Գաբումաճյանի բառարանում³², քանի որ, ինչպես ասացինք, բառերի ստեղծման ժամանակը հետեղեռնյան շրջանն է:

Ակնկալելի էր հայահավաք/հայահավաքում-ը տեսնել Ստ. Մալխասյանցի բառարանում³³, սակայն կոթողային այդ աշխատությունից սրանք բացակայում են: Զարմանալի է, որ այս բառերը չեն ընդգրկվել արեւմտահայերենի բառարաններում³⁴, որոնք լույս են տեսել շատ ավելի ուշ, երբ բառերն արդեն հանրաժանոթ էին: Այդ բացակայությունը կարող ենք բացատրել մասամբ նաեւ Մալխասյանցի բառարանի ազդեցությամբ:

Նրանց հայ ինքնությանը վերադարձնելու գործում:

³¹ «Ազգ», 23.12.2006:

³² Ս. Գաբումաճյան, Նոր բառագիրք հայերէն լեզուի, Կ. Պոլիս, 1910:

³³ Ստ. Մալխասյանց, Հայերէն բացատրական բառարան, Երևան, 1944-45:

³⁴ Պետրոս վրդ. Ճիգմեճյան, Հայերէն աշխարհաբար լեզուի լիակատար բառարան, Հալեպ, 1957: Արտ. Տէր Խաչատուրեան, Հ. Գանգրունի, Փ. Կ. Տօնիկեան, Հայոց լեզուի նոր բառարան, Բեյրութ, 1968: Գնել արք. Ճերեճյան, Փարամազ Կ. Տօնիկեան, Հայոց լեզուի նոր բառարան, հ. 1, Բեյրութ, 1992:

Հայաստանում եւ հայաստանում բառերն առաջին անգամ բառարանային գրանցում են ստացել ժամանակակից հայերենի ակադեմիական բացատրական բառարանում: Հայաստանում այսպիսի բացատրությունը՝ «1. ած. Հայերին հավաքող՝ ի մի բերող՝ միավորող, 2. գ. Հայահավաքում», իսկ հայաստանում այսպիսի՝ «գ. Հայերին հավաքելը՝ մի տեղ ժողովելը»³⁵: Ի դեպ, երկու բառի դեպքում էլ բնագրային օրինակներ չեն բերվում, որ թերութունն է եւ նահանջ այդ բառարանի որդեգրած սկզբունքից:

Այնուհետեւ այդ բառերը տեսնում ենք էդ. Աղայանի բառարանում՝ գրեթե նույն ներկայացմամբ: Տարբերությունն է միայն հայաստանում բառի բացատրության մեջ՝ «Հայերին հավաքելը՝ մի տեղ միավորելը»³⁶:

Հայաստան/հայաստանում-ը չենք գտնում հայերենի հոմանիշների բառարաններում³⁷, չնայած որ ունեն ազգահավաք/ազգահավաքում հայտնի հոմանիշները:

Հետաքրքրական պատկեր ենք նկատում Ա. Սուքիասյանի զույգ բառարաններում: Առաջին բառարանում փոխադարձ հղումներով կան ազգահավաք-ժողովրդահավաք հոմանիշները³⁸: Երկրորդ բառարանում բացակայում է ազգահավաք-ը. սա վերլուծման հետեւանք է, քանի որ ժողովրդահավաք-ից հղում է արվում ազգահավաք-ին³⁹: Հոմանիշների բացատրական բառարանը լույս է տեսել այն ժամանակ (2003-ին), երբ հայաստանում արդեն ընդգրկված էր ակադեմիական եւ Աղայանի բացատրական բառարաններում, սակայն հայաստան-ը կրկին չի ներմուծվել բառացանկ: Այս բառի հարցում փաստորեն պահպանվել է 1967-ի բառարանի վիճակը (դեռ մի բան էլ վատացել է. բառացանկից «թուել է» հոմանիշ ազգահավաք-ը):

Մյուս կողմից էլ, սակայն, փաստենք, որ տարբերակներից միայն հայաստան-ը ներմուծվել է նույն բառարանագրի համահեղինակությունը լույս ընծայված այլ տեսակի մի բառարան⁴⁰, թեպետ բառի գրությունն

³⁵ Հր. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտ, Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարան, հ. 3, Երևան, 1974, էջ 281:

³⁶ Է. Բ. Աղայան, Արդի հայերենի բացատրական բառարան, Երևան, 1976, էջ 810:

³⁷ Յ. Թ. Գալստյան, Բառարան գանձարան հայերեն լեզուի, Կահիրե, 1938. Ա. Մ. Սուքիասյան, Հայոց լեզվի հոմանիշների բառարան, Երևան, 1967, նաև Ա. Մ. Սուքիասյան, Հայոց լեզվի հոմանիշների բացատրական բառարան, Երևան, 2003:

³⁸ Ա. Մ. Սուքիասյան, Հայոց լեզվի հոմանիշների բառարան, էջ 16, 232:

³⁹ Ա. Մ. Սուքիասյան, Հայոց լեզվի հոմանիշների բացատրական բառարան, էջ 360:

⁴⁰ Ա. Մ. Սուքիասյան, Բ. Ա. Սուքիասյան, Արդի հայերենի ուղղագրական-ձևակազմական բառարան, Երևան, 2002, էջ 191:

ու սեռականի կազմությունը մեր կարծիքով դժվարություն չեն ներկայացնում:

Հայահավաք բառը դիպվածային մի հականիշ ունի՝ հայացրում: Մենք արձանագրել ենք բառի միայն մեկ գործածություն. «Եւ ի՞նչ կարիք կարարձրագոչ խոսել հայահավաքի մասին, երբ հայացրումը կանխելն անհնար է»⁴¹: Հետեւաբար զարմանալի չէ, որ հայահավաք-հայացրում հականշային զույգը չի գետեղվել հայերենի հականիշների բառարաններում:

Հայերեն տպագիր բառարանների մեջ բառաքանակով ամենաընդգրկունը համարվող ուղղագրական բառարանում⁴² կա միայն ազգահավաք-ը, սակայն չկան ազգային ամենամեծ իղձերից մեկը նշանակող բառերից ո՛չ հայահավաք-ը, ո՛չ էլ հայահավաքում-ը (նաեւ ազգահավաքում-ը): Այն դեպքում, երբ բառարանի հրատարակումից մի քանի տարի առաջ, ինչպես նշեցինք, հիշյալ բառերը գրանցվել էին ակադեմիական բացատրական բառարանում: Բառի գրանցումն այստեղ, անշուշտ, ավելի շուտ բառապաշարի ամբողջականությունը պահպանելու նպատակ պիտի հետապնդեր: Չմոռանանք, որ հիշատակված բառարանը նաեւ տերմինաբանական ուղղվածություն ունի. իսկ հայահավաք-ը եւ հայահավաքում-ը հայագիտական տերմինի արժեք ունեն:

Հայահավաք եւ հայահավաքում բառերը (նաեւ ազգահավաք-ը) ներկայացվել են նաեւ թարգմանական մի բառարանում⁴³: Գովելի է բառարանագիրների մոտեցումը, քանի որ այս բառերը հայոց պատմության՝ անցյալի, ներկայի եւ առավելաբար ապագայի կարեւոր մի երեւույթ են նշանակում:

Հայ-ռուսերեն ակադեմիական բառարանում հայահավաք-ը բացատրված է այսպես՝ *объединяющая армян, որն ամբողջությամբ չի բացահայտում հայերեն բառի իմաստը. բացակայում է շատ կարեւոր՝ «հայերին հավաքող» իմաստային բաղադրիչը: Այնինչ՝ հայահավաքում բառը բացատրված է միանգամայն ընդունելի ձեւով՝ *сбор, собиране армян в одном месте: Իրականում այս բացատրությունը եւս պետք է լիներ հայահավաք բառահոգվածի շրջանակներում՝ իբրեւ իմաստային մեկ այլ դրսեւորում:**

Հայահավաք եւ հայահավաքում բառերը չեն հանդիպում թարգմանական հայտնի մյուս բառարաններում: Շատ դեպքերում դա կարող է բա-

⁴¹ Ռ. Իշխանյան, Երրորդ ուժի բացառման օրենքը, Հոդվածներ, Երևան, 1991, էջ 43:

⁴² Հովհ. Բարսեղյան, Հայերեն ուղղագրական-ուղղախոսական-տերմինաբանական բառարան, Երևան, 1973:

⁴³ Հայ-ռուսերեն բառարան (գլխավոր խմբագիր՝ Ե. Հ. Գալստյան), Երևան, 1987, էջ 187:

ցատրվել միայն բառացանկի սահմանափակությամբ: Նկատելի է նաեւ, որ բառարանից բառարան կազմողները գրեթե կրկնում են բառային նույն կազմը՝ էապես չլծարմացնելով այն:

Մեր կարծիքով՝ որոշ դեպքերում հայահավաք եւ հայահավաքում բառերի բացակայութիւնն արդարացված է: Ծավալուն (եւ արժեքավոր) մի բառարանում⁴⁴, օրինակ, հայ բաղադրիչով բառերի շարքում ներկայացված են հայագունդ, հայալից, հայախառն, հայախումբ, հայանման եւ այլն, սակայն հայահավաք-ը եւ կամ հայահավաքում-ը, որոնք ազգային-պատմական կարեւոր նշանակութիւն ունեն, չեն զետեղվել:

Պատկերը գրեթե նույնն է մեկ այլ՝ կրկին հաջողված բառարանում⁴⁵, որտեղ գրանցված են հայագունդ, հայադրոշ, հայախումբ, հայակոյր եւ այս կարգի ուրիշ բառեր, սակայն չկան հայահավաք-հայահավաքում-ը:

Հաճախականությունը. Հայահավաք եւ հայահավաքում բառերը չեն ընդգրկվել հայոց լեզվի հաճախականութեան բառարանում⁴⁶: Դա ընդհանրապես հնարավոր էր, սակայն ուշագրավ է, որ հիշյալ բառարանի հիմնական ցանկում հայ սկզբնաբաղադրիչով բառերից տեղ են գտել միայն հայաքնակ, հայագնդ (նաեւ հայագիրություն), հայերեն, հայորդի, հայություն, հայուհի բառերը, 2-1 հաճախականութիւն ունեցող բառերի ցանկում՝ հայագիրական, հայահառաչ, հայանուն, հայաշխարհիկ, հայաստանցի, նույնիսկ Հայպերնասիագիծ⁴⁷: Այս բաշխումը մեզ հավաստի չի թվում թեկուզ այն պարզ պատճառով, որ, օրինակ, հայագիրական-ը հայտնվել է 2-1 հաճախականութիւն ունեցողների շարքում, կամ էլ բառարան չեն մտել հայ սկզբնաբաղադրիչով այնպիսի հաճախական բառեր, ինչպիսիք են, ասենք, հայասեր-ը եւ հայարյաց-ը⁴⁸, ինչպես նաեւ Հայ (< Հայաստանի, Հայկական) բաղադրիչով հապավական բազմաթիվ բաղադրութիւններ:

Կասկած չկա, որ հայահավաք եւ հայահավաքում բառերն առհասարակ մեծ հաճախականութիւն չունեն: ԱՐԵՎԱԿ լեզվաբանական որոնողական համակարգում⁴⁹ հայահավաք բառը ներկայացված է ընդամենը 12 համատեքստում (9 տեքստ, որոնցից մեկը Բ. Վերդյանի «Ծաղիկներս

⁴⁴ Մ. Կ. Գոյումճեան, Ընդարձակ բառարան հայերէնէ անգլիերէն, Բեյրութ, 1970, էջ 398:

⁴⁵ Մ. Յովհաննիսեան, Հայերէն-ֆրանսերէն բառարան (Բ. տպագրություն), Բեյրութ, 1971, էջ 451-452:

⁴⁶ Բ. Կ. Ղազարյան, Ժամանակակից հայոց լեզվի հաճախականության բառարան, Երևան, 1982:

⁴⁷ Անդ, էջ 280, 565-567:

⁴⁸ Այս բառերի մասին տե՛ս Դ. Գյուրջիյան, «Հայասեր եւ հայարյաց բառերի քննություն», «Էջմիածին» հանդես, 2015, Ը., էջ 82-101:

⁴⁹ www.eanc.net:

մնացին հեռվում» վեպն է՝ 3 գործածություն, մեկ վկայություն նույն հեղինակի «Արտակարգ դեպքեր»-ից է, մեկը՝ Ա. Այվազյանի «Եղած-չեղածը՝ մի կյանք»-ից, վեցը՝ «Ազգ» օրաթերթից, մեկն էլ «Հայրենիք» պարբերականից), հայահալաքում բառը՝ ավելի սահմանափակ՝ ընդամենը 9 համատեքստում (4 տեքստ, որոնցից մեկը Վ. Խնչումյանի՝ «Յառաջ»-ում տպագրած հոդվածն է՝ 6 գործածություն, մեկ վկայություն Հայկական սովետական հանրագիտարանից է, երկուսը՝ «Ազգ»-ից):

Հարկ է հաշվի առնել, որ հայերենագիտական, հրապարակախոսական մեծածավալ նյութ կա, որտեղ գործածված են հայահալաք եւ հայահալաքում բառերը, սակայն այդ նյութը տակավին չի ներառվել այս հսկա՝ 110 բառագործածություն ամփոփող շտեմարանի մեջ: Այդ դեպքում պատկերը հաստատապես կփոխվի:

Եթե արեւելահայերենի գործածություններին գումարենք արեւմտահայերեն նյութը, ապա համահայերենյան ընդգրկմամբ հայահալաք-ը եւ հայահալաքում-ը պետք է տեղ ունենան հայերեն բառերի հաճախականությունը ներկայացնող ցանկերում: Դա կնշանակի, որ այս բառերը հետագայում ավելի հաճախ կներառվեն հայերեն տարատեսակ բառարանների բառացանկերում (օրինակ՝ պատմագիտական կամ հայագիտական տերմիններ), ինչպես նաեւ կընդգրկվեն ուսումնական (մասնավորապես համալսարանական) նյութերում⁵⁰:

Հայահալաք եւ հողահալաք. Հատկապես հրապարակախոսություն մեջ հաճախագեպ է հայահալաք բառի հետ համանման կառուցվածք ունեցող հողահալաք-ի գործածությունը: Սա բնական է եւ լիովին հասկանալի. երկուսն էլ ազգային կարեւորագույն՝ միջանցով փոխալսմանավորված իղձերի նշանակիչներ են: Հայահալաք եւ հողահալաք բառերի համատեղ գործածությունը բնորոշ է արդի հայերենի գրական երկու տարբերակներին էլ, առավելաբար՝ արեւմտահայերենին: Օրինակներ՝ «...հայ ժողովուրդը հետեւեցաւ իր ազատագրական գաղափարախօսութեան-հայահալաք եւ հողահալաք կարգախօսին եւ առաջին յաթոնասկով ազատագրեց Արցախը» (Ա. Տոնոյան), «Ուրեմն փակաւին երկար ճամբայ կայ հայահալաքի եւ հողահալաքի ճամբուն վրայ» (Ժ. Հակոբյան), «Էականը՝ հողահալաք եւ հայահալաք, որպէս-

⁵⁰ Այսօր, ինչպես ցույց են տալիս մեր բանավոր հարցումները, հայախոս ավագ դպրոցականները, շատ ուսանողներ, անգամ մտավորականներ չեն ըմբռնում հայահալաք կամ հայահալաքում բառերը եւ, բնականաբար, չեն գործածում իրենց գրավոր ու բանավոր խոսքում:

զի տոկանք եւ տեւենք» (Հ. Պալյան), «Նոյն տրամաբանութեանը կ'ընկալուին հողահաւար եւ հայահաւար հասկացողութիւնները» (Խ. Տեր-Ղուկասյան)⁵¹:

Առնչակից այս բառերը համատեղ գործածվում են առավելաբար եւ չաղկապով: Ավելի քիչ միանում են ու-ով, ինչպես՝ «...մշտական պարզամտ եւ հայ սերունդներին՝ ...Հայկական լեռնաշխարհում համահայկական հողահավարն ու հայահավարը ավարտին հասցնելուն ուղղված», նաեւ առանց չաղկապի՝ «Հայկական կողմը պէտք է մնայ ...պահանջարկի իր դասին, որուն սահմանումը յարակ է հայահաւար, հողահաւար» (Մ. Մանուկյան) կամ հարակցութեամբ՝ «...Հայ Դասի քաղաքական լուծումն ու հողահաւար-հայահաւար» (Ե. Գուլումճյան)⁵²: Եւ, բնականաբար, նրանք գործածվում են թեեւ ոչ կից, բայց իմաստային հանդիպողմամբ. «Ինչպէս պետականօրէն չի գիրակցում Հայահաւարի կարեւորութիւնը, նոյնպէս չի գիրակցում նրա հետ սերտօրէն կապուած Հողահաւարի հարցը» (Ա. Ալվազյան)⁵³:

Վերոբերյալ եւ բնագրային այլ վկայութիւններից կարող ենք եզրակացնել, թե հողահավար եւ հայահավար բառերի համատեղ գործածութեան ժամանակ հեղինակները դրանցից ո՛րն են առաջնային համարում: Ըստ մեր ունեցած նյութերի՝ հայահավար-ը:

Որքան էլ զարմանալի է, այս բառերը, համատեղ գործածվելով, երբեմն նաեւ հեզնական նշանակութիւն են ստանում: Մի խոսքաշարում համազգային նշանակութիւն ունեցող երեւույթները մեկ գործարարի առնչելով եւ տեղայնացնելով՝ հեղինակը փորձել է զավեշտի հասնել. «Այսպիսով «հայահավար, հողահավար» իր ձեռնարկն իրականացնելու համար գործարարն, ըստ իրեն, «գրել» է մի առանցք, որով «շրջելու է աշխարհը»: Այն, ի դեպ, սկսվել է Նյու Վասյունիից՝ Արուստիից, ուր վերջինս «ասպիտովել է» թե՛ ընտրությունների, թե՛ հանրաքվեի «մարտը» արդյունքներ» (Կ. Դավթյան)⁵⁴: Բառերը չակերտների մեջ առնելը թեեւ հուշում է, որ դրանք անսովոր (հակառակ կամ սխալ) նշանակութեամբ են գործածվել, սակայն սա, համենայն դեպս, ազգային իղձեր նշանակող բառերի անհաջող կիրառութիւն պիտի համարել:

⁵¹ Տե՛ս «Ազդարար», 27.03.2009, www.yerakouyn.com/?p=57507, <http://hairenikweekly.com/2015/02/26/20990>, www.horizonweekly.ca/article/details/135:

⁵² Տե՛ս <http://jurnal.am/news/2011-08-11-1187>, www.armenews.com/forums/viewtopic.php?id=3618, www.azadkhosk.com/ (թիւ 40, Հոկտեմբեր, 2014):

⁵³ Տե՛ս <http://asbarez.com/arm/149220/>: Ուշագրաւ է, որ մեզ հետաքրքրող բառերը, որպէս նշանակալից հասկացություններ արտահայտող միավորներ, այստեղ գլխավոր են գրվել:

⁵⁴ www.zhamanak.com/article/2157/:

Նկատելի է, որ նման գործածությունների հանդիպում ենք հատկապես արեւելահայերեն գրավոր խոսքում: Պատճառներից մեկը թերեւս այն է, որ հայահավաք-ը եւ հողահավաք-ը ամուր «նստած չեն» (այսինքն՝ լիարժեք չեն յուրացվել) արեւելահայերեն քաղաքական եւ գիտական խոսույթում, հաճախ չկա նրանց կարեւորություն գիտակցումը:

Կարելի է ենթադրել, որ դեր է խաղացել նաեւ խորհրդային գաղափարախոսությունը, ըստ որի հողահավաք-ը եւ հայահավաք-ը դաշնակցական գաղափարներ էին: Ասվածի արձագանքը կարող ենք տեսնել այստեղ. «Ո՞ր է հայահավաք եւ հողահավաք ՀԹ-ն...»⁵⁵:

Հայահավաք բառի գործածության ոլորտը եւ ոճական արժեքը: Հայահավաք-ը ինչպես ձեւաբանորեն, այնպես էլ ոճականորեն միարժեք չէ: Հանդիպում է տարբեր ոճերի տարաբնույթ բնագրերում:

ա) Գիտական. «Համոզիչ փաստարկներով ներկայացված են ռուսական փրկապետության շրջանում (1828-1917 թթ.) զանազան ներգաղթների, անհամեմատ նպաստավոր սոցիալ-քաղաքական ու փնտեսական լծակների ազդեցությամբ Արեւելյան Հայաստանում րեղի ունեցած հայահավաք գործընթացները»⁵⁶: «Հայ-թուրքական հակամարտության այս բոլոր մակարդակների հիմքում ընկած է Հայաստանի վերականգնված պետականության կենսունակությունը, պաշտպանունակությունը, փնտեսական զարգացումը, հետագայում նաեւ ժողովրդագրական աճը (հայահավաքը) ապահովող հողային խնդիրը՝ Հայկական հարցը»⁵⁷: Այս վերջինում հայահավաքը գիտվում է ժողովրդագրական աճի հիմնական գործոն:

Հայահավաք բառը զուտ հայագիտական եզրույթի նշանակություն ունի:

բ) Հրապարակախոսական (ներառյալ եկեղեցական հոստոթությունը). «Աշտարակեցի մեծագործ Հայրապետը... բախտորոշ գործոն, հզոր ուժ հանդիսացավ իբրեւ Արեւելահայաստանի ազգային հիմքերը ամրացնող հայահավաք առաքյալ, իբրեւ եռանդուն բարեկարգիչ եկեղեցու եւ Մայր Աթոռ սուրբ Էջմիածնի»⁵⁸:

⁵⁵ «Ազգ», 03.05.2006 (Տ. Գամաղելյան):

⁵⁶ Ա. Մերոնյան, գրախոսություն Վ. Խոջաբեկյանի «Բնակչության վերաբնակեցումը եւ տեղաշարժերը XIX-XX դարերում, XXI դարի շեմին», Երևան, 2002, ՊԲՀ, 2002, թ. 3, էջ 293-94:

⁵⁷ Ա. Այվազյան, «Հայ Դատն այսօր» 6-րդ խորհրդածրոյություն կարդացված զեկուցումից, Թեհրան, 2008, 13-14 նոյեմբեր:

⁵⁸ Վազգեն Ա. Կաթողիկոս Ամենայն Հայոց, Հայրապետական քարոզ Փրկչի հրաշափառ եւ Սուրբ Ծննդյան տոնի առթիվ Մայր տաճարում, «Էջմիածին», 1978, Ա., էջ 5:

դ) **Գեղարվեստական.** «Ուրիշ բան չէր լսում, միայն երեխաների լացը եւ դալուկ դեմքերի ու կկոցած աչքերի ճիչը՝ ո՛ր եք մեզ տանում: ...Մեկիկ-մեկիկ հավաքեցին քրդերից, թուրքերից, հայահավաք եղավ որ ի՞նչ»⁵⁹: «Եկան, հայահավաք կայան դարձրին կայսրության ամենանշանավոր հյուրանոցն ու հացադուլ հայտարարեցին»⁶⁰: **Նկատելի է, որ առաջին խոսքաշարում հայահավաք-ը պատմական ազդեակներ է հաղորդում՝ հստակորեն հուշելով որոշակի ժամանակաշրջանի եւ իրադարձություն, երեւույթի (հայերին օտարների գերությունից ազատելու) մասին, երկրորդում ուղղակի նշանակում է «հայերին ի մի բերող»:**

Հանդիպում է նաեւ հրապարակախոսական շեշտադրումներ ունեցող չափածո խոսքում: Այսուհանդերձ, բառը բոլորովին չի ընկալվում իբրեւ գեղարվեստական ոճի միավոր:

Մի շարք խոսքաշարերում հայահավաք բառը ոճականորեն չեզոք է: Այդպես է, օրինակ, այստեղ, թեպետ գործածվել է արվեստագիտական աշխատության մեջ. «Ինչպես արեւելյան հայրվածում հայ մշակույթի խոշոր կենտրոնը Թիֆլիսն էր, այնպես էլ արյասահմանում հայ մշակույթի հայահավաք կարեւոր կենտրոնը Փարիզն էր»⁶¹:

Եւ, վերջապես, հայահավաք եւ հայահավաքում բառեր պարունակող տեքստերը հաճախ պատկերացում են տալիս ազգի ապագայի համար առանցքային նշանակություն ունեցող այդ գաղափարը հղացողների, կրողների եւ իրականացնողների մասին: Դրանք են Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցին⁶², Հայաստան պետությունը, ազգային կուսակցությունները, հայկական տարբեր միություններ, կազմակերպություններ եւ անհատներ:

Ամփոփենք.

1. Ազգահավաքման (հայահավաքման) գաղափարը ծագել է միջնադարում. մատենական առաջին վկայությունը Հովհաննես Սարկավազի «Պայծառացան այսօր» շարականն է:
2. Հայերին միավորելու եւ հայրենիքում հավաքելու գաղափարն իր հստակ ձևակերպումն է ստացել Ս. Ներսես Շնորհալու «Ատենաբանություն» ճառում:

⁵⁹ Բ. Վերդյան, Ծաղիկներս մնացին հեռվում, Երևան, 1990 (ըստ ԱՐԵՎԱԿ-ի):

⁶⁰ Հ. Բեգլարյան, Հրապարակ, Երևան, 2011, էջ 200:

⁶¹ Ե. Մարտիրոսյան, Հայկական կերպարվեստի պատմություն, Երևան, 1987, էջ 6:

⁶² Հմմտ. «Հայահավաքն ու հայության կյանքը կազմակերպելը դարձավ Հայ Եկեղեցու հիմնական առաքելությունը» (Ա. Նազարյան, www.shoghakat.am/am/telecasts/161):

3. Միջնադարյան Հայաստանում ազգահավաքման գաղափարը համակել էր ոչ միայն անհատներին, այլ նաեւ ժողովրդին՝ ծնունդ տալով նոր վիպասանություն՝ «Վասն բարի ժամանակաց»:
4. Հայահավաք/հայահավաքումը հայոց ազգային իղձերի արտահայտիչ բառային միավորներից են: Սրանք համահայերենյան բնույթ ունեն, գործածվում են արդի գրական հայերենի երկու տարբերակներում էլ, արեւմտահայերենում՝ ավելի շատ:
5. Հայահավաք եւ հայահավաքում բառերն ստեղծվել են ի. դարի մեծագույն ոճերից՝ հայերի նկատմամբ Օսմանյան Թուրքիայի իրականացրած ցեղասպանությունից եւ Արեւելյան Հայաստանում անկախություն հաստատումից հետո:
6. Հայահավաք եւ հայահավաքում բառերն ստեղծվել են հայոց պատմությունից առանցքային իրադարձությունների հետեւանքով: Տարբեր դարաշրջաններում այս բառերը տարբեր իրակությունների են հարաբերել: Այսպես, հատկապես հայահավաք բառը գործածվել է, երբ անհրաժեշտ է եղել՝
 - ա) հավաքել թուրքերի, քրդերի եւ այլոց մոտ գերված հայ կանանց եւ երեխաներին (որբերին) (հետեղեռնյան շրջան, ի. դարի 20-ական թվականներ),
 - բ) հայրենի հողերի վրա հավաքել-կենտրոնացնել ցրված հայությունը (ի. դարի ողջ ընթացքում),
 - գ) հայրենիք վերադարձնել աշխարհով մեկ սփռված հայերին (հայրենադարձության տարբեր փուլեր, ինչպես՝ 1946-48 թվականներ),
 - դ) տարբեր թեւերով (գործնական, մշակութային, անձնական եւ այլն) հայրենիքին կապել սփյուռքահայությունը (արդի փուլում):
7. Հայահավաք(ում)ն ընկալվել է որպես՝
 - ա) ազգահավաք, ազգի համախմբում, բ) որբահավաք, գ) գերեվարված հայուհիների ազատագրում եւ վերադարձ հայությունը, դ) հայրենադարձություն (ներգաղթ):
8. Հայ ազգային կարեւորագույն նպատակների արտահայտիչ հայահավաք եւ հոդահավաք բառերը հաճախ միասին են գործածվում, քանի որ փոխկապակցված են հասկացությունները. հողահավաքը ենթադրում է հայահավաք, եւ հայահավաքի շնորհիվ հողորացած երկիրն ի գործ կլինի հողահավաք իրականացնելու:
9. Հայահավաք-ը եւ հայահավաքում-ն ունեն հայագիտական եզրույթի արժեք, սակայն գործածվում են նաեւ որպես ոճականորեն չեզոք բառեր:

Այս բառերը գրքային են՝ գործածական գիտական, հրապարակախոսական եւ գեղարվեստական ոճերում:

РЕЗЮМЕ

Идея сбора армян на своей родине возникла еще в средневековье (Ованес Саркаваг, Св. Нерсес Шнорали). Эта идея актуальна и в наши дни.

В XX веке, в частности после геноцида армян и создания армянской независимой государственности идея собирания на родине разбросанных по всему свету армян стала основой для создания новых армянских слов: ազգահավաք(ում) “объединяющий, сплачивающий нацию, направленный на консолидацию нации”, հայահավաք и հայահավաքում “сбор, собирание армян в одном месте”. Эти слова являются выразителями национальных чаяний и стремлений. В этом смысле они тесно соотносятся со словом հղիահավաք “собирание (освобождение) армянских земель”.

В статье рассматриваются время создания слов հայահավաք/ հայահավաքում, их семантическое восприятие: “сбор, собирание армянских сирот и женщин, оказавшихся в плену у турок и курдов” (арм. ըրիւհավաք) и “репатриация” (арм. հայրենադարձություն), особенности их употребления, частотность, стилистическая и терминологическая значимость, а также лексикографическая обработка.

SUMMARY

The idea of gathering of Armenians in their motherland dates back to the Middle Ages (Hovhannes Sarkavag, St. Nerses Shnorhali). This idea is topical nowadays, too.

In the 20th century, particularly after the Armenian Genocide and creation of Armenian independent statehood, the idea of gathering in the motherland became the foundation for forming new Armenian words: ազգահավաք(ում) “uniting, rallying (of the nation), directed to consolidation of the nation”, հայահավաք and հայահավաքում “collecting, gathering of Armenians in one place”. These words are the spokesmen of national aspirations and ambitions. In this sense, they are closely related to the word հղիահավաք “collecting (release) of Armenian lands”.

In the article the time of the formation of the words հայահավաք/ հայահավաքում is being examined, together with their semantic perception: “collecting, gathering of Armenian orphans and women, caught as captives by Turks and Kurds”, (Arm. ըրիւհավաք) and “repatriation” (Arm. հայրենադարձություն), peculiarities of their usage and frequency, stylistic and morphological values, as well as their analysis in dictionaries.

